ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/08

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Փոթոյանի (պետական գրանցման վկայական թիվ 273.110.1085248),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/282-2021 գրությամբ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ազգային անվտանգության ծառայության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 28.12.2020թ. թիվ 20/1069 և 11.01.2021թ. թիվ 20/4 գրությունների հիման վրա 14.01.2021թ. թիվ 26/26-1/282-2021 գրությամբ նախաձեռնել է «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.01.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարած թիվ «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ԲՆԱ2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 2020թ-ի փետրվարի 4-ին կնքել է պայմանագիր Խլորամին Բ ախտահանիչ միջոցի մատակարարման համար: Պայմանագիրը ուժի մեջ է մտել ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո 11.02.2020փ-ին լրացուցիչ համաձայնագիր կնքելու պահից:

Ապրանքը պետք է ներմուծվեր ՌԴ-ից: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ՌԴ Կառավարությունը 2020թ-ի մարտի 2-ին ուժի մեջ է մտցնում թիվ 223, որոշումը, որով արգելվում է ախտահանիչ միջոցների արտահանումը ՌԴ-ից մինչև 2020թ-ի հունիսի 1-ը:

Մատակարարի հետ երկարատև բանակցություններից հետո մեզ հաջողվում է ներկրել ախտահանիչ միջոցի պայմանագրով նշված ամբողջ քանակությամբ և առաջին խմբաքանակը մատակարարել պատվիրատուին 2020թ-ի մայիս ամսին:

Առաջին խմբաքանակը մատակարարելուց հետո պատվիրատուից ստացել ենք հեսախոսազանգ, որ պատվիրատուն կատարել է մատակարարած ապրանքի լաբորատոր փորձաքննություն և ակտիվ քլորի պարունակությունը չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրին: Մեր կողմից պահանջ է ներկայացվել պատվիրատուին տրամադրելու լաբորատոր փորձաքննության արձանագրությունը, որը պատվիրատուն չի տրամադրել և պահանջել է հետ վերցնել ապրանքը և փոխարինել որակյալ ապրանքով:

18.05.2020թ-ին մեր կողմից ապրանքի նմուշը ներկայացվել է FDA լաբորատորի և 19.05.2020թ-ի տրված լաբորատոր փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ ապրանքը իրոք չի համապատասխանում տեխնիկական բնութագրին և մատակարարած ապրանքը հետ ենք վերցրել (կից ներկայացնում ենք լաբորատոր փորձաքննության արձանագրությունը):

Դրանից հետո կապ ենք հաստատել արտադրող կազմակերպության հետ և տեղեկացրել ստեղծված խնդիրների մասին և պահանջել ենք անորակ ապրանքը անհապաղ փոխարինել որակյալ ապրանքով՝ այսինքն ակտիվ քլորի պարունակությունը

ախտահանիչ միջոցում պետք է լինի ոչ պակաս քան 25% և միաժամանակ պահանջել ենք երաշխիկ նամակ, որ ապրանքը կմատակարարվի մեզ հստակ տեխնիկական բնութագրին համապատասխան:

11.06.2020թ-ին արտադրող կազմակերպությունը տալիս և մեզ՝ «Ջետտա» ՍՊԸ-ին երաշխիկ նամակ, որով պարտավորվում է մատակարարել միայն տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք: «Ջետտա» ՍՊԸ-ն և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն հանդիսանում են փոխկապակցված կազմակերպություններ և բոլոր ներկրումները իրականացնում է «Ջետտա» ՍՊԸ-ին, իսկ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն իրականացնում է ապրանքի մատակարարումը:

Օգոստոս ամսին իրականացնում ենք 2-րդ խմբաքանակի ներկրումը, որի որակը արտադրողը հավաստում է նաև լաբորատոր փորձաքննությունով հաստատված որակի հավաստագրերով /կից ներկայացնում ենք որակի հավաստագիրը նույնպես/, և մեր կողմից ապրանքը անմիջապես մատակարարում ենք պատվիրատուին:
Սակայն կրկին ստանում ենք հեռախոսազանգ պատվիրատուից նույն բովանդակությամբ և նույն պահանջներով:

Օգոստոսի 7-ին մեր կողմից կրկին ապրանքի նմուշը ներկայացնում ենք է FDA լաբորատորի և 10.08.2020թ-ի տրված լաբորատոր փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ ապրանքը կրկին չի համապատասխանում տեխնիկական բնութագրին և մատակարարած ապրանքը կրկին հետ ենք վերցրել պատվիրատուից (կից ներկայացնում ենք լաբորատոր փորձաքննության արձանագրությունը):

Կրկին կապնվել ենք արտադրող/մատակարար կազմակերպության հետ և ներկայացրել մեր խնդիրները, իրենց ներկայացված երաշխիկ նամակը և այն հետևանքները, որի առջև կհայտնվի մեր կազմակերպությունը պայմանագիրը պատշաճ չկատարելու դեպքում: Եվ պահանջել ենք արտադրողից արագ քայլեր ձեռնարկել խնդիրը լուծելու համար: Արտադրող/մատակարար կազմակերպությունը խոստացավ փոխել հումքը և արտադրել նոր խմբաքանակ նոր հումքից: /Արտադրող կազմակերպության հետ բանակցությունների պատճենները ներկայացվել են Ձեզ ՍՑ-ԼԳ-2021/08 ծածկագրով նիստի ժամանակ/:

Ինչպես նաև պատվիրատուի և արտադրողի հետ բանավոր պայմանավորվածություններ ձեռք բերվեցին մինչև նոր խմբաքանակի մատակարարումը ներկայացնել նոր խմբքանակի նմուշ, որի դրական լաբորատոր փորձաքննության արդյունքները ստանալու հետո միայն կիարականցվի նոր խմբաքանակի մատակարարումը:

Նոյեմբեր ամսվա վերջին արտադրողը ուղարկում է նոր խմբաքանակի նմուշը, սակայն բեռնափոխադրող կազմակերպությունը մեզ տեղեկացրել, որ բեռնափոխադրման խնդիրների պատճառով հնարավոր է ուշանա:

Հասկանալով, որ արդեն մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը չենք կարողանալու մատակարարել ապրանքը դիմել ենք Պատվիրատուին համաձայնություն ենք ձեռք բերել գնել ապրանքը ներքին շուկայից և մատակարարել պատվիրատուին, ինչը և արել ենք դեկտեմբեր ամսին:

Սակայն, պատվիրատուն՝ տեղական շուկայից գնված և մատակարարած ապրանքը նույնպես ներկայացնում է լաբորատոր փորձաքննության և պարզում, որ ակտիվ քլորի պարունակությունը չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Ինչպես երևում է ներկայացված փաստերից, մեր կազմակերպության կողմից կատարված քայլերից և դրանց հաջորդականությունից, գտնում ենք, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն կատարել է բոլոր հնարավոր և անհնար քայլերը և ձեռնարկել է բոլոր միջոցները պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարելու համար, սակայն իր կամքից և իր հնարավորություններից անկախ չի հաջողվել այն իրականացնել:

Հարկ ենք համարում նաև նշել, որ նախկինում նույնպես ունեցել ենք պայմանագրեր նույն ապրանքի մատակարարման համար և հաջողությամբ մատակարարել ենք նույն տեխնիկական բնութագրով:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ -ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/08 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.12.2020թ. թիվ 20/1069 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության

04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ ներկայացնում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 05.12.2019թ. «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ԲՆԱ2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մասնակցի՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/08 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 04.02.2020թ. կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ԲՆԱ2/2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 11.02.2020թ. կնքվել է N 11/85-2020 համաձայնագիրը, որին կից N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 550 կգ «Քլորամին Բ» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել ըստ ամիսների՝ մինչև 30.06.2020թ. 200 կգ, մինչև 30.09.2020թ. 150 կգ, մինչև 15.12.2020թ. 200 կգ:

3. «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 25.12.2020թ. թիվ 20/1068 ծանուցմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 04.02.2020թ. կնքված «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ԲՆԱ2/2» ծածկագրով ապրանքի

մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 11.02.2020թ. կնքված N 11/85-2020 համաձայնագրի՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 15.12.2020թ. մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը՝ թիվ 5 չափաբաժնով՝ 1.589.500 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 550 կգ /Քլորամին Բ/, մինչդեռ նշենք, որ առաջին խմբաքանակի՝ 200 կգ /Քլորամին բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 30.06.2020թ., երկրորդ խմբաքանակի 150 կգ /Քլորամին բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 30.09.2020թ., իսկ վերջին խմբաքանակի՝ 200կգ /Քլորամին բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 15.12.2020թ.:

Հաշվի առնելով մասնակցի կողմից, աշխարհում ստեղծված իրավիճակի՝ կապված COVID-19 համավարակի հետ պատճառաբանությունը, մասնակցին տրվել է ողջամիտ ժամկետ, պատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքի մատակարարման հնարավորություն, սակայն կրկին ներկայացվել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից տրված փորձարկվող նմուշները /1 փաթեթ 300գ/ ներկայացվել են 04.08.2020թ., 23.09.2020թ. և 16.12.2020թ. լաբորատոր փորձարկման, սակայն, լաբորատորիայի կողմից տրված՝ թիվ 79, թիվ 103 և թիվ 1431 եզրակացության արդյունքում թե առաջին, թե երկրորդ և թե վերջին ներկայացված /Քլորամին Բ/-ի նմուշներում ակտիվ քլորի պարունակության տոկոսը չի համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7-րդ կետը, որի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7-րդ կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 2.1.7.1 կետը և Պայմանագրի 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է Պայմանագիրը և համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 158.950 (մեկ հարյուր հիսունութ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (համաձայնագրի՝ նշված չափաբաժնի ընդհանուր գումարի 10%-ը)»:

4. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 25.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/282-2021 գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 28.12.2020թ. թիվ 20/1069 և 11.01.2021թ. թիվ 20/4 գրությունները և կից փաստաթղթերը, «Ադիդա թրեյդ» ՍՊԸ-ի 22.01.2021թ. դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 04.02.2020թ. կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ԲՆԱ2/2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 11.02.2020թ. կնքվել է N 11/85-2020 համաձայնագիրը, որին կից N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 550 կգ «Քլորամին Բ» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել ըստ ամիսների՝ մինչև 30.06.2020թ. 200 կգ, մինչև 30.09.2020թ. 150 կգ, մինչև 15.12.2020թ. 200 կգ:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 25.12.2020թ. թիվ 20/1068 ծանուցմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 04.02.2020թ. կնքված «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ԲՆԱ2/2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 11.02.2020թ. կնքված N 11/85-2020 համաձայնագրի՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 15.12.2020թ. մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը՝ թիվ 5 չափաբաժնով՝ 1.589.500 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 550 կգ /Քլորամին Բ/, մինչդեռ նշենք, որ առաջին խմբաքանակի՝ 200 կգ /Քլորամին բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 30.06.2020թ., երկրորդ խմբաքանակի 150 կգ /Քլորամին բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 30.09.2020թ., իսկ վերջին խմբաքանակի՝ 200կգ /Քլորամին բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 15.12.2020թ.:

Հաշվի առնելով մասնակցի կողմից, աշխարհում ստեղծված իրավիճակի՝ կապված COVID-19 համավարակի հետ պատճառաբանությունը, մասնակցին տրվել է ողջամիտ ժամկետ, պատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքի մատակարարման հնարավորություն, սակայն կրկին ներկայացվել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից տրված փորձարկվող նմուշները /1 փաթեթ 300գ/ ներկայացվել են 04.08.2020թ., 23.09.2020թ. և 16.12.2020թ. լաբորատոր փորձարկման, սակայն, լաբորատորիայի կողմից տրված՝ թիվ 79, թիվ 103 և թիվ 1431 եզրակացության արդյունքում թե առաջին, թե երկրորդ և թե վերջին ներկայացված /Քլորամին Բ/-ի նմուշներում ակտիվ քլորի պարունակության տոկոսը չի համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7-րդ կետը, որի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7-րդ կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

<u>Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 2.1.7.1 կետը և Պայմանագրի 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է Պայմանագիրը և համաձայնագիրը:</u>

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 158.950 (մեկ հարյուր հիսունութ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (համաձայնագրի՝ նշված չափաբաժնի ընդհանուր գումարի 10%-ը)»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 25.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Այսպիսով՝ անդրադառնալով «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընկերության կողմից տրամադրվել է ««ТАТСОРБ» поволжский завод сорбентов» ընկերության 11.06.2020թ. թիվ 172 գրությունը՝ ուղղված «Ջետտա» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանին՝ հետևյալ բովանդակությամբ.

««НПО ПЗС «ТАТСОРБ» և «Ջետտա» ՍՊ ընկերությունների միջև 10.06.2020թ. կնքվել է թիվ 220-2020 «Քլորամին Բ» ապրանքատեսակի մատակարարման պայմանագիրը:

Համաձայն «ЦЗЯСИН ГРАНД КОРПОРЕЙШН» մատակարարվող ապրանքի 16.02.2019թ. (խմբաքանակ 201902163) դեղագործական արտադրանքի հավաստագրի ակտիվ քլորի քանակական պարունակությունը փաստացի կազմում է 25%:

«ՀՊՕ ՊՁՀ «ТАТСОРБ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ե. Ս. Շմելեվի, հավաստիացնում է, որ ակտիվ քլորի քանակական պարունակությունը միջինը կկազմի 25%՝ համաձայն վերը նշված հավաստագրի (հավաստագիրը կցված է գործին)»:

Ինչպես նաև «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրամադրվել է մատակարար ընկերության հետ իրականացված նամակագրությունը (info@armfarm.com և 5120055@mail.ru էլ. փոստի հասցեների միջև), համաձայն որի՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն 06.12.2020թ. հայտնել է, որ իրականացված փորձաքննությունների արդյունքում պարզվել է, որ մատակարարված Քլորամին Բ ապրանքատեսակի բաղադրության մեջ ակտիվ քլորի քանակական պարունակությունը կազմում է 11.15%, այնուհետև 10.12.2020թ. խնդրել է լուծում տալ խնդրին և ապահովել ապրանքի հնարավորինս սեղմ ժամկետում մատակարարումը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ տվյալ դեպքում անպատշաճ որակի ապրանքը մատակարարվել է «ՀՊՕ ՊՁՀ «ТАТСОРБ» ՍՊԸ-ի մեղքով, որը, ինչպես արդեն վերը շարադրված գրությամբ նշվեց, հավաստիացրել էր Ընկերությանը՝ Քլորամին Բ ապրանքատեսակի բաղադրության մեջ ակտիվ քլորի քանակական պարունակության 25% կազմելու մասին, իսկ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են նույնպես նույն ընկերության ոչ պատշաճ գործելաոճի արդյունքում:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, Ընկերության կողմից Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունները, «ՀՊՕ ՊՁՀ «ТАТСОРБ» ընկերության գրությունը և տրամադրված նամակագրությունը, ինչպես նաև հաշվի առնելով Covid-19 համավարակի արդյունքում Պայմանագրով նախատեսված ապրանքի նկատմամբ բազմաթիվ երկրներում առաջացած մեծ պահանջարկը և որոշ սահմանափակումները՝ գտնում եմ, որ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության:

Միևնույն ժամանակ գտնում եմ, որ Ընկերությունը նման պայմաններում, այն է՝ հավաստիացված լինելով ապրանքի պատշաճ որակի լինելու մասին, չէր կարող կանխատեսել հետագայում դրա՝ Պայմանագրով սահմանված ապրանքին անհամապատասխանությունը և դրանից բխող հետագա խնդիրները՝ կապված մատակարարման ժամկետների հետ:

Վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Ընկերությունն արդյունքում օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած

պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը կատարելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/282-2021 գրությամբ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**